ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-Ի ԹԻՎ ԹԻՎ 2,3-Ն ԵՎ 5-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 2 որոշման նախաբանում կատարված հղումները սխալ են:

Որոշման 5-րդ կետը չի համապատասխանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի պահանջներին, համաձայն որի՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարները նշանակվում են մրցույթի արդյունքներով: Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների նշանակման և ազատման վերաբերյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում 2019 թվականի սեպտեմբերի 10-ին (ՀՕ-154-Ն) կատարվել են փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտել 2019 թվականի հոկտեմբերի 5-ից: Իսկ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով: Մինչև համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի կայացումը համայնքի ղեկավարը կարող է նշանակել համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար ոչ ավելի, քան վեց ամիս ժամկետով:Եթե հայտարարված մրցույթը համարվում է չկայացած, ապա ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկանգամ՝ երեք ամիս ժամկետով:

Անհրաժեշտ է որոշման 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի՝ եթե նորմատիվ իրավական ակտը հակասում է հետագայում ուժի մեջ մտած ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին, ապա իրավաստեղծ մարմինը, պարտավոր է իր ընդունած նորմատիվ իրավական ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին ընդունել նորմատիվ իրավական ակտ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում, եթե ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտով այլ ժամկետնախատեսված չէ:

Որոշման 4-րդ կետով հաստատվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Մանթաշի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային

կազմակերպության ամրացվող անհատույց օգտագործման իրավունքով հանձնվող գույքի կազմն ու արժեքը: Սակայն որոշմամբ հաստատված N 2 հավելվածում երառված չէ կազմակերության մնացած գույքը:

Որոշման տեքստի վերջում գրառված է ավագանու 7 անդամներից նիստին մասնակցել են ավագանու 5 անդամներ՝ կողմ 5, սակայն առկա է ավագանու 6 /կողմ/ անդամի ստորագրություն:

Թիվ 3-Ն որոշման նախաբանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներին հղում կատարելիս անհրաժեշտ է նշել նաև հոդվածի մասի համարը, հոդվածի մասի կետի կամ ենթակետի համարը:

Որոշմամբ կատարված գումարային փոփոխություններով խախտվել է բյուջեի հավասարակշռությունը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝ համայնքի բյուջեում կատարվող փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի հավասարակշռությունը: Բացի այդ, որոշման ծախսային մասում՝
տնտեսագիտական և գործառնական դասակարգման ծախսային մասերի փոփոխությունները թերի են կատարված:

Թիվ 5-Ա որոշման նախաբանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածին կատարված հղումը սխալ է, քանի որ այն համարվում է նշված օրենքի եզրափակիչ մասը:

Որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 5-րդ տողում «1-ին կարգի մասնագետ /3.2-1/» սյունակի դիմաց «Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)» սյունակում նշված «51.03» թիվը փոխարինել «56.03» թվով, «Ընդամենը» տողի «Հաստիքի քանակը» սյունակում «11» թիվը՝ «13» թվով:

Որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 6-9-րդ տողերում «Դաստիարակ» սյունակի դիմաց «Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)» և «Աշխատած ամիսների քանակը» սյունակներում նշված «32.2» և «12» թվերը համապատասխանաբար փոխարինել «56.03» և «10» թվերով:

Կատարող՝Ն.Մարտիրոսյան
07.05.2020թ.